ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

"03" 07 2020 թ. N 04-Հ

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 01-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝ համաձայն NN1-7 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի 2020 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 01-Ա հրամանը:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Ա.ՂԵՎՈՆԴՅԱՆ**

"03" 07 2020թ

ք. Երևան

Հավելված N 1
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գործերի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր մեջ ընդգրկում է ֆինանսատնտեսագիտական բաժինը և ընդհանուր բաժինը և իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Լիցենզավորման մասին» «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին»,«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման մեթոդների, դրանց կիրառման մեխանիզմների ու ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգի նախագծի մշակում,
   3) զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային առաջադրանքների մշակումներին մասնակցություն,
   4) իր իրավասության սահմաններում, ռազմական դրության պայմաններում զորահավաքային պահանջմունքների բավարարման համար զորահավաքային առաջադրանքների հսկողության իրականացում,
   5) պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող նյութական արժեքների ցանկի և վարման կարգի նախագծի մշակում,
   6) մասնակցում է մարտական զենքի արտադրության համար լիցենզիա տրամադրելու մարմնի գործառույթներին, ինչպես նաև տրամադրվող լիցենզիայի պայմանների նկատմամբ հսկողության իրականացմանը,
   7) իրականացնում է Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական գործի պլանավորումը և հաշվապահական հաշվառումը,
   8) Իրականացնում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կոմիտեի կարիքների համար անհրաժեշտ բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացների կազմակերպման աշխատանքները,
   9) իրականացնում է Mulberry համակարգով, էլեկտրոնային փոստով, փոստով, սուրհանդակային ծառայության միջոցով, առձեռն և այլ եղանակներով ստացված ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների, գրությունների, դիմումների և այլ փաստաթղթերի սահմանված կարգով գրանցման, հաշվառման և առաքման աշխատանքները,
   10) իրականացնում է անձնակազմի կառավարման գործառույթները,

11) ապահովում է ռազմարդունաբերության բնագավառին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը, միջազգային պայմանագրերի, հուշագրերի, համաձայնագրերի և արձանագրությունների նախագծերի նախապատրաստումը,
12) ներկայացնում և պաշտպանում է Կոմիտեի շահերը դատական մարմիններում :

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը:

5. Վարչության պետը՝
   1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին,
   3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս վարչության աշխատողներին,
   4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,
   5) ապահովում է վարչությանն առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
   6) սահմանում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև,
   7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 2
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ և ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) արտադրության, նորոգման և օգտահանման կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Լիցենզավորման մասին» «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների պետական պատվերի (ներհանրապետական գնումներ, նորոգման, արդիականացման աշխատանքներ) ու դրա ձևավորման կարգի նախագծի մշակում,
   3) մասնակցում է պաշտպանական պատվերի և օգտահանման աշխատանքների գնագոյացման և շահութաբերությունը խթանող միջոցառումներին,
   4) իր իրավասության սահմաններում պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների գործունեության ապահովումը,
   5) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգի նախագծի մշակում,
   6) իր իրավասության սահմաններում մասնակցում է նախարարության կառավարմանը վերապահված պետական բաժնեմաս ունեցող՝ ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ընդգրկված ընկերությունների կառավարման իրականացմանը,
   7) նոր ստեղծված, արդիականացված և նորոգված սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների փորձարկումների կազմակերպում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը:
3. Վարչության պետը՝
   1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին,
   3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս վարչության աշխատողներին,
   4) գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,

5) ապահովում է վարչությանն առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
6) սահմանում է աշխատանքի բաշխում Վարչության աշխատողների միջև,
7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 3
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) որակի վերահսկողության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Լիցենզավորման մասին» «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության կարգի մշակում,
   3) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրում (այսուհետ՝ ՌԱՀ) ռազմական պատվերի կատարման որակի կառավարման համակարգի ներդրում և որակի հսկողության իրականացում,
   4) իր իրավասության սահմաններում համակարգում է ՌԱՀ-ի սուբյեկտների միջև համագործակցության գործունեությունը,
   5) մասնակցում է հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների, փորձանմուշների, ներհանրապետական արտադրանքի տեսականու մասին տեղեկությունների և տեխնիկական փաստաթղթերի հավաքմանն ու հաշվառմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը:
5. Վարչության պետը՝
   1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին,
   3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս վարչության աշխատողներին,
   4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,
   5) ապահովում է Վարչությանն առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
   6) սահմանում է աշխատանքի բաշխում Վարչության աշխատողների միջև,

7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 4
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ և ՓՈՐՁԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Լիցենզավորման մասին» «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝
   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի (այսուհետ՝ ՌԱՀ) կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման կարգի նախագծի մշակում,
   3) հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների տակտիկատեխնիկական պահանջների, տեխնիկական առաջադրանքների ելակետային տվյալների և մեթոդական-նորմատիվային փաստաթղթերի ստեղծման աշխատանքներին մասնակցություն,
   4) ՌԱՀ-ին առնչվող հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական ծրագրերի պետական գիտական և գիտատեխնիկական փորձաքննության աշխատանքների կազմակերպում,
   5) նոր ստեղծված, արդիականացված և նորոգված սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների փորձարկումների կազմակերպում,
   6) հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների, փորձանմուշների, ներհանրապետական արտադրանքի տեսականու մասին տեղեկությունների և տեխնիկական փաստաթղթերի հավաքում ու հաշվառում,
   7) սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական միջոցների պետական պատվերի (հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ) ու դրա ձևավորման կարգի նախագծի մշակում,

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը:
5. Վարչության պետը՝
   1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին,
   3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս վարչության աշխատողներին,
   4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,

5) ապահովում է Վարչությանն առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
6) սահմանում է աշխատանքի բաշխում Վարչության աշխատողների միջև,
7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 5
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ռազմարդյունաբերական համալիրի զարգացման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Պաշտպանության մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Լիցենզավորման մասին» «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝
   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական բազայի վարում,
   3) Հայաստանի Հանրապետությունում առկա՝ ռազմարդյունաբերությանն առնչվող տեխնոլոգիաների հաշվառում և համապատասխան բազայի ստեղծում ու վարում,
   4) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի (այսուհետ՝ ՌԱՀ) ինժեներատեխնիկական, գիտատեխնիկական և միջին մասնագիտության մասնագետների պատրաստման ծրագրերի խթանում,
   5) Կոմիտեի համակարգում միասնական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման նախագծերի մշակում,
   6) մասնակցում է ՌԱՀ-ի գործունեությունը կարգավորող ու համակարգող կարգերի նախագծերի մշակմանը,
   7) մասնակցում է ՌԱՀ-ի կադրերի պատրաստման պետական ծրագրերի մշակման և համապատասխան պետական պատվերների ձևավորման աշխատանքների կազմակերպմանը,
   8) ՌԱՀ-ի միասնական տեղեկատվավերլուծական համակարգի մշակման, ներդրման աշխատանքների կազմակերպումը,
   9) իր իրավասության սահմաններում սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի զարգացման ու պահպանման, ռազմարդյունաբերության, ռազմատեխնիկական համագործակցության նախագծերի մշակում և իրականացում, մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի (այսուհետ՝ ՌԱՀ) գործունեության սուբյեկտներին պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակմանը,
   10) սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության ու նորոգման համար արտադրական հզորությունների ստեղծմանն ուղղված պետական ներդրումների ներգրավման միջոցառումների մշակում և իրականացում,
   11) մասնակցում է Կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական գործի պլանավորմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է վարչության պետը:
5. Վարչության պետը՝
   1) ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին,

3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս վարչության աշխատողներին,
4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,
5) ապահովում է Վարչությանն առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
6) սահմանում է աշխատանքի բաշխում Վարչության աշխատողների միջև,
7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 6
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3-ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջազգային համագործակցության բաժինը (այսուհետ՝ Բաժին) Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգիրքով, «Միջազգային պայմանագրերի մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական» օրենսգրքով, «Պաշտպանության մասին», «Զենքի մասին», «Գնումների մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Ռազմարդյունաբերական համալիրի մասին», «Պետական նյութական պահուստի մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի «Օտարերկրյա պետություններ գործուղումների կարգը և գործուղման արդյունքների մասին հաշվետվության օրինակելի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1230-Ն որոշմամբ Նախարարության կանոնադրության, Կոմիտեի կանոնադրության, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջներով:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Բաժինը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերության և ռազմատեխնիկական պետական քաղաքականության կենսագործման համար նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական ակտերի ու փաստաթղթերի նախագծերի մշակմանը,
   2) նախապատրաստում է միջազգային միջոցառումներին (ցուցահանդես, կոնֆերանս, նստաշրջան, ֆորում) և հանդիպումներին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը,
   3) ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման աշխատանքները, ստանում միջազգային համագործակցության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը,
   4) ապահովում է միջազգային համագործակցության ուղղությամբ անհրաժեշտ հանդիպումների կազմակերպման, բանակցությունների վարման, համաձայնագրերի նախագծերի պատրաստման, թարգմանության, ընթացիկ նամակագրության աշխատանքները,
   5) համակարգում է ոլորտային արտասահմանյան գործուղումների հետ կապված անհրաժեշտ աշխատանքների կատարումը, պատվիրակությունների ձևավորումը և փաստաթղթային ձևակերպումները,
   6) իրականացնում է արարողակարգային գործառույթներ, այդ թվում ապահովում է արտասահմանյան պատվիրակությունների ընդունման, տեղավորման, սպասարկման, ճանապարհելու աշխատանքները,
   7) նպաստում է հայրենական սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների և ունեցվածքի ճանաչման և հեղինակության բարձրացմանն ուղղված աշխատանքներին:

III. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

5. Բաժնի պետը՝
    1) ղեկավարում է բաժնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
    2) բաժնին վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին
    3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս բաժնի աշխատողներին,
    4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում բաժնի աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,
    5) ապահովում է բաժնին առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
    6) սահմանում է աշխատանքի բաշխում բաժնի աշխատողների միջև,
    7) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հավելված N 7
Ռազմարդյունաբերության կոմիտեի
նախագահի 2020թ. հուլիսի 3- ի
N 04-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ռազմարդյունաբերության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) առաջին բաժինը (այսուհետ՝ բաժին) Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Կոմիտեին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրները և գործառույթները:
2. Բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Բաժինը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրագործման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) մշակում և իրականացնում է գաղտնիության ռեժիմի ապահովմանն ուղղված միջոցառումներ,
   2) կազմակերպում և իրականացնում է Կոմիտեի գաղտնի գործավարությունը:

III. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:
5. Բաժնի պետը՝

   1) ղեկավարում է բաժնի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների համար,
   2) բաժնին վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի նախագահին, Գլխավոր քարտուղարին
   3) իր իրավասության սահմաններում հանձնարարություններ է տալիս բաժնի աշխատողներին,
   4) Գլխավոր քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում բաժնի աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ,
   5) ապահովում է բաժնին առընչվող Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի հրամանների, ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների, ինչպես նաև Կոմիտեի նախագահի տեղակալների ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների իրականացումը,
   6) սահմանում է աշխատանքի բաշխում բաժնի աշխատողների միջև,
   7) իրականացնում է Հայ աստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: